

1.3. Չներ և սակագներ

2004թ. հունվար-ապրիլին զների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական զների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի զների ինդեքս ²⁾	Չների ինդեքսը շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերքի իրացման զների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման զների ինդեքս ⁶⁾
Հունվար	102.5	99.5	100.3	99.4	98.5	101.0
Փետրվար	99.4	108.6	97.9	100.8	101.0	99.5
Մարտ	100.3	101.9	102.4	99.4	97.2	101.1
Ապրիլ	101.2	96.1	99.8	99.6	99.8	99.5
Ապրիլը 2003թ. դեկտեմբերի նկատմամբ	103.5	105.9	100.5	99.2	97.0	96.5
2004թ. հունվար-ապրիլը 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ	107.5	126.9	102.3	96.3	97.8*	104.6*

*) 2004թ. ապրիլի և 2003թ. դեկտեմբերի ընթացիկ զներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում զների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ Չների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով: Չների ինդեքսի հաշվարկը կատարվում է ժողտնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչի (ժՏԾՀԴ) համաձայն: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (ՏԳՏԴ) համապատասխան զների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակման փուլում է:

³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:


⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման զների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման զների և ծավալների հետազոտման տվյալների:

Չների, սակագների աճի տեմպերը 2003-2004թթ. հունվար-ապրիլին

(նախորդ տարվա հունվար-ապրիլի նկատմամբ, %)



Սպառողական զներ: Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 2004թ. մարտ-ապրիլին գրանցվել է 1.5% ընդհանուր գնաճ, ընդ որում ապրիլին գնաճը կազմել է 1.2%, ինչը մեծապես պայմանավորվել է պարենային որոշ ապրանքատեսակների զների սեզոնային փոփոխություններով:


2004թ. ապրիլին մարտի համեմատ պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գներն աճել են 1.6%, ծառայությունների սակագները՝ 1.0%, իսկ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.1% գնանկում:

Սպառողական գների ինդեքսը 2004թ. ապրիլին 2003թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 103.5%, ինչը 0.7 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (104.2%): Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 104.7%, ոչ պարենային ապրանքներինը՝ 100.2%, ծառայությունների սակագներինը՝ 101.4%:

2004թ. հունվար-ապրիլին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.9%, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից ցածր է 0.1 տոկոսային կետով (1.0%):

Սպառողական գների հավելաճը 1995-2004թթ. ապրիլին

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)




2004թ. ապրիլին 2003թ. ապրիլի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 107.6%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 110.5%, ոչ պարենային ապրանքներինը՝ 100.3%, ծառայությունների սակագներինը՝ 102.8%, իսկ հունվար-ապրիլին 2003թ. հունվար-ապրիլի համեմատ՝ համապատասխանաբար 107.5%, 110.6, 100.3, 102.0%:

2004թ. ապրիլին 2002թ. համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 113.5%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 118.7%, ոչ պարենային ապրանքներինը՝ 102.9%, ծառայությունների սակագներինը՝ 104.0%:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2004թ. հունվար-ապրիլին

(նախորդ ամսվա համեմատ, %)



Արտարժուրային շուկա: 2004թ. ապրիլին մարտի համեմատ սպառողական շուկայում գրանցված 1.2% գնաճը ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 1.1% նվազումով: Ապրիլին 2003թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների հավելածը կազմել է 3.5%, իսկ հաշվարկային փոխարժեքի գծով գրանցվել է 1.5% նվազում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է սպառողական գների ու հաշվարկային փոխարժեքի համապատասխանաբար 4.2% և 0.6% հավելած: ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2004թ. ապրիլին կազմել է 556.86, ինչը 5.3% ցածր է 2003թ. ապրիլի համապատասխան ցուցանիշից (588.14 դրամ):


Պարենային ապրանքների գներ: 2004թ. մարտ-ապրիլին գրանցվել է պարենային ապրանքների 2.1% գնաճ, ընդ որում ապրիլին մարտի համեմատ պարենային ապրանքների գնաճը կազմել է 1.8%: Դրան հիմնականում նպաստել է ձկնամթերքի, կաթնամթերքի, մրգի ապրանքախմբերում գրանցված գնաճը:

2004թ. ապրիլին շարունակվել է դեռևս փետրվարին արձանագրված ձկնամթերքի գնաճի միտումը և 3 ամիսների ընդհանուր գնաճը կազմել է 2.1 անգամ: Ապրիլին մարտի համեմատ գրանցվել է ձկնամթերքի 46.6% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է «սիգ» տեսակի թարմ ձկան 55.5% գնաճով: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում գրանցվել է ձկնամթերքի 21.2-58.9% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Գյումրիում: Մայրաքաղաքում ձկնամթերքի գնաճը կազմել է 49.3%:

Մրգի ապրանքախմբում 2004թ. ապրիլին 2003թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 12.5% գնաճ, ինչը 11.5 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (24.0%): 2004թ. մարտ-ապրիլին գրանցվել է մոտ 10.0% ընդհանուր գնաճ, ընդ որում ապրիլին մարտի համեմատ մրգի գնաճը կազմել է 7.7%: Նշված ժամանակահատվածում խնձորի, խաղողի, տանձի, ինչպես նաև ներմուծված (ցիտրուսային և արևադարձային) մրգից կիտրոնի, ադամաթզի, նարնջի, մանդարինի գներն աճել են 1.5-27.2%: Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում գրանցվել է մրգի 2.7-15.6% գնաճ (ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք.Գյումրիում), իսկ Եղեգնաձոր և Դիլիջան քաղաքներում՝ համապատասխանաբար 7.1% և 1.5% գնանկում: Մայրաքաղաքում մրգի գնաճը կազմել է 8.3%:

Մրգի գների փոփոխությունները 2002-2004թթ. հունվար-ապրիլին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)



Կաթնամթերքի ապրանքախմբում 2004թ. մարտ-ապրիլին գրանցվել է 9.5% ընդհանուր գնաճ, ընդ որում ապրիլին գնաճը կազմել է 6.7%, ինչը հիմնականում պանրի 13.9% գնաճի արդյունք է: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում գրանցվել է կաթնամթերքի 0.1-9.9% գնաճ (համեմատաբար բարձր ցուցանիշ արձանագրվել է ք. Երևանում), իսկ ք. Թալինում՝ 1.3% գնանկում:


2004թ. ապրիլին շարունակվել է մսամթերքի ապրանքախմբում դեռևս հունվարին սկսված գնաճի միտումը և 4 ամիսների ընդհանուր գնաճը կազմել է 7.3%: Ապրիլին մարտի համեմատ մսամթերքի գնաճը կազմել է 2.0%, ինչը մեծապես պայմանավորվել է խոզի (3.7%) և տավարի (3.4%) մսի գնաճով: Ոչխարի մսի գնաճը նշված ժամանակահատվածում կազմել է 0.3%: Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում մսամթերքի գնաճը կազմել է 0.6-2.9% (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Երևանում), իսկ Գյումրի և Դիլիջան քաղաքներում արձանագրվել է համապատասխանաբար 0.3% և 0.2% գնանկում:

Հացամթերքի, ոչ ոգելից խմիչքի, ձվի ապրանքախմբերում 2004թ. ապրիլին մարտի համեմատ գրանցվել է 0.1-0.2% գնաճ:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2004թ. փետրվար-ապրիլին արձանագրվել է 9.7% գնանկում: Ապրիլին մարտի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի գնանկումը կազմել է 1.8%, ինչը մեծապես պայմանավորվել է վարունգի (18.2%), կարտոֆիլի (3.2%), լոլիկի (3.0%), կաղամբի (2.0%) գնանկումով: Հանրապետությունում դիտարկված 8 քաղաքներում արձանագրվել է բանջարեղենի և կարտոֆիլի 13.3-0.4% գնանկում (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Կապանում), իսկ Վաղարշապատ և Եղեգնաձոր քաղաքներում՝ համապատասխանաբար 3.9% և 2.1% գնաճ:

Բանջարեղենի և կարտոֆիլի գների փոփոխությունները 2002-2004թթ. հունվար-ապրիլին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)



Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում 2004թ. ապրիլին մարտի համեմատ արձանագրվել է 0.3% գնանկում, ընդ որում ոգելից խմիչքի գներն աճել են 0.2%, իսկ ծխախոտի գինը նվազել է 0.4%:

Շաքարավազի, սուրճի, թեյի, կակաոյի, կենդանական և բուսական յուղի, հրուշակեղենի ապրանքախմբերում 2004թ. ապրիլին մարտի համեմատ գրանցվել է 0.2-0.1% գնանկում:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(%)

	2004 թվականի			
	ապրիլը		հունվար-ապրիլը 2003թ. հունվար- ապրիլի նկատմամբ	ապրիլը 2002թ. նկատմամբ
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. մարտի նկատմամբ		
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	104.7	101.6	110.6	118.7
Պարենային ապրանքներ	105.3	101.8	111.5	120.7
հացամթերք	101.9	100.1	133.1	133.5
մսամթերք	107.3	102.0	111.5	117.1
ձկնամթերք	131.6	146.6	93.3	151.1
կաթնամթերք	111.0	106.7	103.0	109.2
ձու	92.0	100.2	115.2	119.4
կենդանական և բուսական յուղ	103.9	99.9	110.1	112.7
միրգ	112.5	107.7	100.4	128.8
բանջարեղեն և կարտոֆիլ	111.2	98.2	88.6	115.0
շաքարավազ	100.9	99.8	96.5	99.2
սուրճ, թեյ, կակաո	103.6	99.9	102.6	104.4
հրուշակեղեն	101.9	99.9	101.2	103.6
այլ մթերքներ	100.7	99.6	100.4	100.0
ոչ ոգելից խմիչք	100.8	100.1	103.0	104.7
<i>Ոգելից խմիչք և ծխախոտ</i>	99.6	99.7	103.0	101.8

Ոչ պարենային ապրանքների գներ: 2004թ. ապրիլին մարտի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրված աննշան գնանկմանը հիմնականում նպաստել է վառելիքի, խոհանոցային սպասքի, կահույքի, մշակույթի ապրանքների, հագուստի և կտորեղենի, ոսկերչական ապրանքների, կենցաղային էլեկտրաապրանքների, կոշիկեղենի 1.5-0.2% գնանկումը: Նշված ժամանակահատվածում լվացամիջոցների, շինանյութերի, դեղամիջոցների, գորգեղենի, այգեգործական, գեղահարդարման, անձնապիտո ապրանքների, տեքստիլեղենի գներն աճել են 0.1-1.0%, իսկ գրենական պիտույքների գները մարտի համեմատ մնացել են անփոփոխ:

2004թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 0.4% և 6.2% գնաճ: 2004թ. ապրիլին 2003թ. դեկտեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գնաճը կազմել է համապատասխանաբար 5.0% և 2.5%:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

(%)

	2004 թվականի			
	ապրիլը		հունվար-ապրիլը 2003թ. հունվար- ապրիլի նկատմամբ	ապրիլը 2002թ. նկատմամբ
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. մարտի նկատմամբ		
Ոչ պարենային ապրանքներ <i>այդ թվում.</i>	100.2	99.9	100.3	102.9
հագուստ և կտորեղեն	99.4	99.8	99.3	101.6
վառելիք	96.9	98.5	103.9	124.7
կահույք	99.5	99.7	97.5	98.7
գորգեղեն	100.4	100.4	99.9	104.0
տեքստիլեղեն	101.0	101.0	97.6	98.7
կենցաղային էլեկտրաապրանքներ	99.8	99.8	97.3	95.5
խոհանոցային սպասք	99.5	99.3	100.5	101.5
լվացամիջոցներ	100.2	100.1	101.4	101.6
շինանյութեր	100.0	100.1	99.8	98.9
այգեգործական ապրանքներ	100.7	100.5	107.8	105.5
դեղամիջոցներ	101.6	100.3	96.6	94.2
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	104.9	100.9	103.0	113.8

	2004 թվականի			
	ապրիլը		հունվար-ապրիլը 2003թ. հունվար- ապրիլի նկատմամբ	ապրիլը 2002թ. նկատմամբ
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. մարտի նկատմամբ		
մշակույթի ապրանքներ	99.2	99.6	97.3	96.5
գրեմական պիտույքներ	100.2	100.0	100.9	99.9
գեղահարդարման ապրանքներ	101.0	100.2	101.1	102.2
ոսկերչական ապրանքներ	103.3	99.8	108.3	127.1
անձնապիտո ապրանքներ	99.6	100.1	99.1	99.2

Ծառայությունների սակագներ: 2004թ. ապրիլին մարտի համեմատ ծառայությունների ոլորտում նկատելիորեն աճել են բնակարանային-կոմունալ ծառայությունների սակագները՝ կապված 2004թ. ապրիլի 1-ից հանրապետությունում խմելու ջրի վարձի 87.0% թանկացման հետ: Նշված ծառայությունների սակագների հավելաճը նպաստել է սպառողական գների աճին 0.2 տոկոսային կետով, այսինքն առանց վերը նշված ծառայությունների սակագների փոփոխությունների սպառողական գների ինդեքսը հանրապետությունում կազմել է 101.0%:

Հանգստի կազմակերպման ծառայությունների սակագների հավելաճը 2004թ. ապրիլին մարտի համեմատ կազմել է 3.8%, ինչը հիմնականում հյուրանոցային ծառայությունների սակագների 11.9% հավելաճի արդյունք է: Նշված ժամանակահատվածում կապի, մշակույթի, հանրային սննդի ծառայությունների սակագների հավելաճը կազմել է 0.6-1.6%: Դրան զուգընթաց, բուժսպասարկման, կենցաղային, տրանսպորտի ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 2.7-0.1% նվազում, իսկ կրթության համակարգի, իրավական ու բանկային ծառայությունների սակագները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(%)

	2004 թվականի			
	ապրիլը		հունվար-ապրիլը 2003թ. հունվար- ապրիլի նկատմամբ	ապրիլը 2002թ. նկատմամբ
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. մարտի նկատմամբ		
Ծառայություններ, ընդամենը	101.4	101.0	102.0	104.0
<i>այդ թվում.</i>				
կենցաղային	99.3	99.5	99.1	98.7
բնակարանային-կոմունալ	103.8	102.7	101.1	103.8
բուժսպասարկման	97.6	97.3	100.4	98.1
տրանսպորտի	99.6	99.9	106.0	107.2
կապի	101.3	100.6	104.0	110.3
մշակույթի	107.8	100.9	126.7	134.8
կրթության համակարգի	100.3	100.0	98.5	101.0
հանգստի կազմակերպման	103.1	103.8	101.6	104.0
հանրային սննդի	102.3	101.6	103.1	107.1
իրավական և բանկային	100.2	100.0	100.0	100.0

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: 2004թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետությունում դիտարկված 9 քաղաքներում արձանագրվել է սպառողական գների 0.4-1.5% գնաճ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է մայրաքաղաքում), իսկ ք. Կապանում գների մակարդակը մնացել է անփոփոխ:

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2004թ. ապրիլի 30-ի դրությամբ

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս-տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տանյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
ՀՀ, միջինը	1338	1551	1622	705	500	255	120	312	91	296
<i>այդ թվում.</i>										
Երևան	1329	1654	1630	698	495	258	130	300	100	292
Գյումրի	1375	1367	1575	710	500	268	95	350	68	300
Վանաձոր	1366	1316	1550	686	550	240	120	383	56	300
Վաղարշապատ	1400	1333	1503	690	500	240	120	300	70	350
Թալին	1400	1500	1650	750	500	250	110	300	100	350
Դիլիջան	1400	1400	1700	750	500	250	120	300	100	275
Հրազդան, Չարենցավան	1400	1600	1600	703	500	251	101	300	90	230
Եղեգնաձոր	1400	1500	1650	700	500	240	120	400	130	300
Մարտունի	1150	1200	1700	750	500	250	85	320	50	350
Կապան	1280	1500	1740	738	480	266	100	350	100	300
Արտաշատ	1300	1700	1600	750	467	250	100	350	100	300

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1 կգ-ի, ձվի՝ տանյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2004թ. ապրիլի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6790 դրամ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Եղեգնաձորում՝ 6940 դրամ, իսկ ամենացածրը՝ ք. Մարտունիում՝ 6355 դրամ), ինչը 11.9% գերազանցել է նույնանուն ապրանքատեսակների 2003թ. ապրիլի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (6067 դրամ):

Հանրապետությունում դիտարկված 6 քաղաքներում 2004թ. ապրիլին մարտի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.7-0.1% գնանկում (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Եղեգնաձորում), 3-ում՝ 0.3-0.4% գնաճ, իսկ ք. Մարտունիում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2004թ. ապրիլին մարտի համեմատ բոլոր հետազոտված քաղաքներում գրանցվել է սակագների 0.6-2.4% հավելաճ, ընդ որում հավելաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Թալինում: Մայրաքաղաքում ծառայությունների սակագների հավելաճը կազմել է 0.7%:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2004թ. ապրիլին 2003թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի

(%)

	Սպառողական գների ինդեքսը	<i>այդ թվում</i>				ծառայությունների
		սպառողական ապրանքների	<i>դրանցից</i>			
			պարենային ապրանքների	ոգելից խմիչք և ծխախոտ	ոչ պարենային ապրանքների	
ՀՀ, ընդամենը	103.5	103.9	105.3	99.6	100.2	101.4
<i>այդ թվում.</i>						
Երևան	103.6	104.1	105.5	99.3	100.2	101.2
Գյումրի	103.1	103.2	104.4	100.3	99.6	102.4
Վանաձոր	104.6	105.1	106.5	101.5	100.5	102.5
Վաղարշապատ	103.4	103.8	105.1	100.0	99.8	101.4
Թալին	104.3	104.5	105.8	100.8	100.4	103.1
Դիլիջան	104.6	105.1	106.8	101.0	99.9	101.8
Հրազդան, Չարենցավան	102.2	102.5	103.6	97.6	100.4	100.8
Եղեգնաձոր	103.6	104.1	105.5	102.3	99.0	101.4
Մարտունի	102.9	103.3	104.5	99.9	100.0	101.2
Կապան	101.7	101.7	102.0	100.5	100.8	101.9


Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսները 2004թ. Արտաշատ¹ քաղաքում

(նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝				ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից՝			
			պարենային ապրանքների	ոգելից խմիչքի և ծխախոտի	ոչ պարենային ապրանքների	
Մարտ	100.4	100.2	100.3	100.0	99.9	101.1
Ապրիլ	102.1	102.1	102.6	100.3	101.1	102.0

Սպառողական գների ինդեքսը հանրապետության դիտարկված քաղաքներում 2004թ. հունվար-ապրիլին

(նախորդ տարվա հունվար-ապրիլի նկատմամբ, %)



Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը: 2004թ. փետրվար-մարտին հանրապետությունում գրանցված արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի 10.8% գնաճին ապրիլին հաջորդել է 3.9% գնանկում:

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի

(%)

	2004 թվականի			2002թ. նկատմամբ
	ապրիլը		հունվար-ապրիլը 2003թ. հունվար-ապրիլի նկատմամբ	
	2004թ. մարտի նկատմամբ	2003թ. ապրիլի նկատմամբ		
Ամբողջ արդյունաբերությունը	96.1	124.5	126.9	133.4
<i>այդ թվում</i>				
էլեկտրաէներգետիկա	100.8	98.3	98.8	98.8
գունավոր մետալուրգիա	88.3	163.3	174.3	208.3
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	100.6	121.3	119.6	128.1
մեքենաշինություն	106.0	105.8	97.5	101.9
այլ արդյունաբերական արտադրություն(ոսկերչական արդյունաբերություն)	100.4	106.6	109.8	112.7
անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի արդյունաբերություն	96.2	112.7	102.5	98.4
չինամյութերի արդյունաբերություն	113.0	103.6	99.9	104.4
թեթև արդյունաբերություն	95.5	100.5	103.9	99.2
սննդի (մերանյալ ալյուրի ու համակց - ված կերերի) արդյունաբերություն	96.6	129.1	130.6	132.3
պոլիգրաֆիական արդյունաբերություն	137.2	81.7	83.4	142.6


¹ 2004թ. փետրվարից սկսած գների դիտարկումը կատարվում է նաև Արարատի մարզում (Արտաշատ քաղաքում):

Բեռնափոխադրումների սակագների ինդեքսը: 2004թ. ապրիլին 2003թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է տրանսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագների 0.8%, իսկ 2004թ. մարտի համեմատ՝ 0.4% նվազում: Վերջինս հիմնականում պայմանավորվել է օդային և խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների 0.5% նվազումով: Նշված ժամանակահատվածում երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների նվազումը կազմել է 0.4%, իսկ ավտոմոբիլային տրանսպորտում գրանցվել է սակագների 2.2% հավելում:

2004թ. ապրիլին 2003թ. ապրիլի համեմատ տրանսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 95.5%, այդ թվում երկաթուղային տրանսպորտով՝ 95.2%, ավտոմոբիլայինով՝ 102.2%, օդայինով՝ 91.8%, խողովակաշարային տրանսպորտով՝ 95.6%, իսկ հունվար-ապրիլին 2003թ. հունվար-ապրիլի համեմատ՝ համապատասխանաբար 96.3%, 96.2, 99.9, 92.8, 96.3%:

Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների զննան գների ինդեքսը ¹: 2004թ. ապրիլին 2003թ. դեկտեմբերի համեմատ գյուղատնտեսական մթերքի իրացման գները հանրապետությունում նվազել են 3.0%-ով, իսկ մարտի համեմատ՝ 0.2%-ով:

Գյուղմթերքի իրացման գների ինդեքսները ՀՀ մարզերում
2004թ. ապրիլին, ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի
(նախորդ ամսվա նկատմամբ, %)



2004թ. ապրիլին մարտի համեմատ արձանագրվել է բուսաբուծական մթերքի իրացման 2.8% գնանկում, ինչը հիմնականում կերային մշակաբույսերի (9.5%), բանջարեղենի (5.1%), մեղրի (3.5%) գնանկման արդյունք է: Նշված ժամանակահատվածում հացահատիկային, տեխնիկական մշակաբույսերի, մրգի ապրանքախմբերում արձանագրվել է 4.2-17.8% գնաճ:

Գյուղատնտեսական մթերքի իրացման միջին գները ՀՀ-ում 1999-2004թթ. ապրիլին
(դրամով)

	Չափի միավորը	1999	2000	2001	2002	2003	2004
Ցորեն	կգ	114	100	103	102	98	158
Գարի	- ,, -	114	79	92	97	96	150
Լոբի	- ,, -	399	310	365	368	397	311

¹ Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների զննան գների ինդեքսների հաշվարկման համար 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների փոխարեն 2004թ. ապրիլից սկսած ՀՀ-ում հետազոտություններ են կատարվում 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Չափի միավորը	1999	2000	2001	2002	2003	2004
Կարտոֆիլ	- ,,,-	115	64	94	129	137	61
Կաղամբ	- ,,,-	87	29	102	48	70	40
Գազար	- ,,,-	65	40	72	100	50	100
Գլուխ սոխ	- ,,,-	...	122	...	137	146	300
Խնձոր	- ,,,-	151	96	136	194	167	167
Տանձ	- ,,,-	200	100	136	180	200	240
Խաղող	- ,,,-	200	...	400	...
Ընկույզ (կեղևով)	- ,,,-	780	667	688	754	806	1000
Մեղր	- ,,,-	2349	2434	2762	2500	2124	2500
Միս տավարի	- ,,,-	858	808	883	878	966	1050
Միս ոչխարի	- ,,,-	852	858	875	923	988	1092
Միս խոզի	- ,,,-	797	924	1122	956	941	1407
Կաթ	լ	110	106	106	100	103	105
Մածուց	- ,,,-	182	169	171	177	173	176
Պանիր (յուղոտ)	կգ	882	767	805	796	779	858
Չու	հատ	43	40	40	42	42	46
Միամյա խոտեր	կգ	18	15	27	19	22	29
Բազմամյա խոտեր	- ,,,-	24	22	24	31	20	40

... _ դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել

2004թ. ապրիլին 2003թ. դեկտեմբերի համեմատ անասնապահական մթերքի իրացման գնաճը կազմել է 1.4%, իսկ մարտի համեմատ՝ 0.4%: Վերջինս հիմնականում պայմանավորվել է մսամթերքի 2.4% գնաճով: Նշված ժամանակահատվածում բրդի, կաշվեհումքի, ձվի, կաթնամթերքի ապրանքախմբերում գրանցվել է 11.7-2.0% գնանկում:

Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներն ըստ մարզերի

	Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2004թ. ապրիլին		2004թ. ապրիլին	
	2004թ. մարտի նկատմամբ	2003թ. ապրիլի նկատմամբ	2004թ. մարտի նկատմամբ	2003թ. ապրիլի նկատմամբ
<i>ՀՀ, ընդամենը</i>	99.8	96.8	99.5	104.4
այդ թվում.				
Արագածոտն	98.0	104.4	103.1	106.3
Արարատ	92.2	110.8	106.9	102.0
Արմավիր	98.0	105.6	100.4	101.2
Գեղարքունիք	99.7	73.0	102.7	106.0
Լոռի	100.7	111.2	100.5	101.2
Կոտայք	100.7	103.4	102.2	101.3
Շիրակ	100.0	108.0	99.5	108.4
Սյունիք	105.7	93.9	95.1	107.4
Վայոց ձոր	100.3	99.2	100.8	106.2
Տավուշ	101.9	123.0	102.6	106.8

2004թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետությունում գրանցվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների 0.5% նվազում, ինչը հիմնականում պայմանավորվել է գյուղատնտեսական մանր գործիքների (10.4%), բույսերի պաշտպանության միջոցների (9.8%), սերմացուների և տնկիների (9.5%) գնման գների և գյուղատնտեսական վճարովի ծառայությունների սակագների (8.3%) նվազումով: Նշված ժամանակահատվածում էներգիայի և քսայուղերի, պարարտանյութերի, շինանյութերի, անասնակերի, անասունների, մեքենասարքավորումների և պահեստամասերի գնման գներն աճել են 0.3-18.1%: